

Եւ իմ Հոգիս ձեր ներսիդին
պիտի դնեմ, ու ձեզի իմ
օրէնքներուս մէջ քաղիլ պի-
տի տամ, ու իմ իրաւունքներս
պիտի պահէք ու ի գործ դ'էք:
Եւ ձեր հայրերուն տուած երկ-
րիս մէջ պիտի բնակիք, ու
դո՞ք ինձի ժողովուրդ պիտի
ըլլաք, եւ ալ ձեզի Աստուած
պիտի ըլլամ: Եզեկ. 19. 27-28:

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Եւ ամենք որ Քրիստոս
սիրենք եւ՛ իրենց
մարմինը խաբը հագնեն
ցին բնական կիրքերով ու
ցանկաւ խնամելով մէկտեղ:
Եթէ Հոգիով կ'ապրինք,
Հոգին համեմատ քա-
ղենք: Դադ. Ե. 24-25:

“PANPÈRE” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Բաժնեգին տարեկան. — Ֆրանսա եւ Սուրիա 5 ֆր. Արտագաւթման 1,50 շիլ կամ 40 ամերկ. Սէնթ
RÉDACTEUR H. N. GHAZAROSSIAN, 29, Rue Fauchier — MARSEILLE (France)

ԹԻԻ 3

Դ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1928

ԶԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԻՆԳԶԻՆՔԸ ՃԱՆՉՆԱԼ

ՍԱՏՈՒ ՍՈՒՆՏԱՐ ՍԻՆԿԷ

Եթէ մարդ ինքզինքը ճանչնար — Եթէ ինք ո'վ է եւ
ի՞նչ է — պիտի ճանչնար նաեւ զԱյն, որուն «պատկերովն»
ու նմանութիւնովք ստեղծուած է, «վանդի Աստուծոյ
վրայով գիտնալու բանը իրենց մէջ յայտնի է, որովհետեւ
Աստուած անանց յայտնեց» (Հովմ. Ա. 19): Սակայն պէտք
է ի միտ ունենալ Եթէ Աստուծոյ եւ անձին գիտութիւնը
այս աշխարհին գիտութեանէն եւ իրաւասութեանէն կախեալ
չէ, վանդի զանազան «ուսմաններն» (isms) ու բանա-
ծիւններն ու էսարմոնութիւնները (ologies and oncologies) յա-
ճախ զմեզ ճշմարտութեանէն կը շեղեցնեն փոխանակ
աւելի մտեցնելու:

Այս աշխարհին լոկ զարգացումն ու իմաստութիւնը
կրնան խելոքիւ մարդուս ներքին ծայնն ու զգացումները,
որոնց տեղը կը գրաւէ տեսակ մը արուեստական ծայն,
որը միշտ մուրկեցուցիչ է: Իսկ ճշմարիտ գիտութիւնն ու
իմաստութիւնը աղօթքով եւ աննշաղկուն Եւանքի ձեռք կը
բերուին, որովհետեւ այն ատեն տեղի կ'ունենայ Թախք
մը «միայնակէն» դէպի «միակը», վանդի Աստուած մի-
այն սրտին ներքին սննդակին մէջ կը խօսի:

Ուրիշ խօսքով այս աշխարհիս գիտութիւնը ձեռք կը
բերուի դաստիարակութեամբ, բայց հոգեւոր գիտութիւնը
Աստուծոյ լուստարութեամբ ներքին տեսութիւնով կ'ըլլայ:
Հոգեւոր գիտութեան հասնելու համար պիտի է արձնեցնել
հոգիին կարողութիւններն, ներքին զգայարանները,
որոնք Թախք եւ սպաննուած են մեղքին պատճառաւ:

Անշամ մը կոյր մը կ'ուզէր իր Սր. Գիրքը կարդալ,
սակայն ցուրտէն իր մատերուն ծայրերը ստուած ըլլալով՝
ոչ իսկ բառ մը կրցաւ կարդալ, ուստի նստաւ կրակին
մօտ սկսաւ տաքցնել ու շփել իր ձեռքերը: Մի քանի
վայրկեան յետոյ ձեռքերը տաքցան ու ինքը մտտերը
դիւրաւ սահեցնելով կրցաւ կարդալ իր գիրքը: Այսպէս
ալ ալ յօշոթով եւ անձնաքննութեամբ «Արդարութեան» արեւ.

գալին» (Մադ. Գ. 2) ճառագայթները եւ Սուրբ Հոգւոյն
կրակը կը գործեն սրտին մէջ, զմեզ հրաշարելու եւ ար-
ձնեցնելու համար:

Այս կերպով զԱստուած եւ ինքզինքնիս ճանչնալով՝
կրնանք յաւիտեանս վայելել իր օրհնեալ եւ կենսատու
ներկայութիւնը: Երբ մենք Աստուծոյ որդիներ կ'ըլլանք
«վերստին ծնունդով» Սր. Հոգին առանց ծայնի եւ կամ
էրկրաւոր բառերու մեզի ու ղղա կ'ի կը խօսի, տարվե-
ցնելով եւ յայտնելով հոգեւոր կեանքի գաղտնիքները. ին-
չու որ երբ Հոգիէն վերստին կը ծնինք, հոգեւոր լեզուն
միւ մարմնի լեզուն կ'ըլլայ, զոր կրնանք ուսանիլ առանց
դժուարութեան, նման մանկան մը, որ իր մօրը խօսած
լեզուն կը տարվի: Շնչաւոր լեզուն եւ բառերը միայն
արտաքին միջոցներ են միայն հասկցնելու, բայց հոգեւոր
մարդ մը — մանուկի մը նման — նոյնիսկ առանց բառե-
րու կը հասկնայ Աստուծոյ հասկցնել ուզած խորհուրդնե-
րը...: Զոր օրինակ. եթէ անգլիախօս մանուկի մը սոր-
վեցնել ուզենք Սանսքրիթ լեզունով Աստուած բանին նշա-
նակութիւնը, որ է Իզուար, կ'ըսենք Եթէ Իզուար կը նշա-
նակէ Աստուած, սակայն մանուկը սկիզբէն ի՞նչ լեզունով
հասկցած էր Եթէ «Աստուած» Աստուած ըսել է: Սա ման-
կան մարմնի հաղորդութեամբ էր առանց բառերու, ինչպէս
Պօսթմոնցի կոյր խուլ եւ համր աղջիկը — ՇԼԼԷՆ ՔԵՂԵՐ
կ'ըսէ Եթէ ինք զԱստուած աղբէն կը ճանչնար աշխարհի
լեզունով Անոր անունը լսելէն առաջ:

Արեւը իր լոյսին միջոցաւ միայն կը տեսնուի, նոյն-
պէս ալ «ճշմարտութեան Արեւը» կամ «Աշխարհի լոյսը»
կրնայ տեսնուիլ միայն իր լոյսով: Մարդ ինքզինքը
կրնայ տեսնել եւ ճանչնալ միայն այս ճշմարիտ լոյսովը,
բայց նախ քան զայս, ան հոգեւոր տեսողութեան կը կա-
րօտի, քանզի կոյրերը, եւ անոնք որ կը նային եւ չեն
տեսնել, չեն հասկնար այս ճշմարտութիւնը (Մատթ.

ԺԳ. 13) : Քրիստոսի Աստուածածնինը հասկանալու համար պէտք է մարդ ըլլանք, բառին բուն նշանակութեամբը, վաճառի կենդանական կեանքը, հոգ չէ թէ որքան աւելա- տարեալ ըլլայ ինքնին բառական չէ : Անկեալ եւ մեղաւոր մարդիկ չեն կրնար ճանչնալ զԱյն, այլ «Նոր մարդը եւ նոր ստեղծուածը» (Կող. Գ. 10) անհրաժեշտ են ճանչնալու զԱյն, որ անկրեւոյթ Աստուծոյ պատկերն է, (Կող. Ա. 15) Նստաւ ինքզինքը, որ ստեղծուած էր այդ պատկերին նմանութիւնով :

Մեղքին պատճառաւ մարդուն սրտակերը այլափոխուած եւ արատաւորուած է, այնպէս որ վերանորոգութեան կը կարծախ ճանչնալու համար իր Տէրն ու Փրկիչը :

Մեղքի պատճառաւ մարդը ոչ միայն ինկած է իր մարդկային դիրքէն այլ նաեւ մեռած է, ահա թէ ինչու չգրգար Աստուծոյ ներկայութիւնը, որ ամենուրեք է տղին նման, եւ նա կը նմանի դիակի մը, որ հակառակ օդով շրջապատուած ըլլալուն չգրգար զայն կամ չի շնչեր : Նմանապէս մեղքի մէջ մեռածները, ոչ կրնան ճանչնալ զԱստուծոյ, ոչ ալ ուրախանալ աղօթքի շնչառութեամբ, կամ պաշտել զԱյն հոգով եւ ճշմարտութիւնով :

Աստուծոյ Ազամին մէջ կենդանութեան շունչ փչեց, Ծննդ. Բ. 7 եւ նա եղաւ «կենդանի հոգին», սակայն մեղքի միջոցաւ «կենդանի հոգին» մեռաւ, ուստի անհրաժեշտ էր որ Տէրը անոնց մէջ նոր կեանք փչեր, որ յաւիտեանական է (Յովն. Ի. 22) :

Խիստ կարեւոր է որ մարդս ճշմարիտ ապաշխարութեամբ Աստուծոյ դառնայ եւ Անոր ներկայութեամբն ու լոյսովը ինքզինքը ճանչնայ, ապա թէ ոչ երկու վտանգ կը սպառնայ իրեն. կամ պիտի գրկուի Աստուծոյ բաղդը ներկայութեան երջանկութենէն, եւ կամ միեւնոյն ներկայութեամբ լեցուած ըլլալով՝ Անոր խաղաղութիւնովը պիտի սկսի երեսակալել թէ ինքը Աստուծոյ է :

ԶԱստուծոյ եւ ինքզինքը իրապէս ճանչնալու եւ իրական կեանքը ձեռք բերելու համար, անհրաժեշտ է որ մարդ իր անձը ուրանայ (Ղուկ. Թ. 23-24), վաճառի ան որ իր անձնական փափաքներն ու կամքը կ'ուրանայ, Աստուծոյ կամքը կատարելու համար, իր հոգւոյն բոլոր ձգտումներովը կատարելապէս գոհացում պիտի գտնէ այն կամքին մէջ՝ որ զինքն ստեղծեց : Իսկ եթէ մէկը իր անձնական կամքին համաձայն եւ ինքնախաճառութեամբ ապրի, թէ իր կամքը պիտի ոչնչացնէ եւ թէ այդ կամքը գոհացնելու կարողութիւնը : Այսինքն, ան որ ինքզինքը կ'ուրանայ, թէ զԱստուծոյ պիտի գտնէ եւ թէ ինքզինքը, ապա իր բոլոր կարողութիւններուն շուրջ պիտի ընդունի, բայց ան որ չ'ուրանալ իր անձը հոգեւոր անձնաւորութեան կը գործէ :

Աստուծոյ մարդը ազատ էակ մը ստեղծեց, եւ անոր տուաւ ազատութեան բանալին, մարդս հիմա կարող է իր սրտին դուռը Աստուծոյ կամ սատանային բանալու. թէ որ այս ազատութեան պարգեւը չարաչար գործածէ, իր Արարչին հաշիւ տալու պատրաստ պիտի ըլլայ եւ Անկէ պիտի ստանայ արդար հատուցում :

Երբ մարդ այսպէս ինքզինքին վնասելով, այն աստիճանին հասնի որ իր սիրտը եւ զգացումները մեռ-

նին, ուրիշներու ալ վնաս կը պատճառէ (Ա. Կորնթ. ԺԲ. 12 եւ 26). Իսկ եթէ նա զգաստ եւ արթուն ըլլար, փոխանակ ինքզինքին եւ ուրիշներու վնաս հասցնելու, կրցածը պիտի ընէր իր եւ ուրիշներու հոգեւոր կեանքին բարձրացման համար, այսպէսով Աստուծոյ կամքն ու նպատակը գործադրած պիտի ըլլար իր կեանքին մէջ :

Ղշտի ու տառապանքի հարցը շատերը շփոթեցուցած է, թէպէտեւ ասոր պատճառը մեղքը կրնայ ըլլալ, բայց ոչ միշտ, որովհետեւ Աստուծոյ երբեմն իր զաւակները իրեն կը քաշէ տառապանքի միջոցաւ : Խաչը անհրաժեշտ է իր հոգեւոր կեանքին եւ անոր անձնին : Եթէ վիշտն ու տառապանքը Աստուծոյ ժողովուրդին օգտակար չ'ըլլային Տէրը անմիջապէս աշխարհի երեսէն կը սրբէր, կը վերցնէր զանոնք, բայց այսպէս չ'ըլլաւ : Եթէ Աստուծոյ չ'ուրէր որ մենք խաչէն ազատ ըլլանք, ուրեմն մենք ինչո՞ւ ջանալու ենք անկէ խուսափիլ ու փախելիլ, քանի որ Ան կ'ուզէ խաչը մեր բարիքն ծառայեցնել :

Յիշէ հոգին մէջ ցանուած ցորենին հատը, մինչեւ որ ան երեսան գայ՝ (որպէսզի արեւին լոյսէն օգտուի պտուղ բերելու համար) պէտք է ձի հոգին մութ խաւերուն տակ : Խնդիրը մեզի համար ալ նոյնն է : Ուստի այս աշխարհիս վրայ, ոչ միայն ցորեն կայ, այլ նաեւ մի քանի ժամուան կամ օրուան գիշեր մը որ, նոյն իսկ ամիսներ ալ կրնայ տեսնել, բեւեռային երկիրներու գիշերուան պէս :

Այս աշխարհիս վրայ ոչ մէկը կրնայ խուսափիլ տառապանքէն եւ խաչէն : Անպայման պէտք է անցնիլ մահուան շուրի ձորէն (Սաղմ. ԻԳ. 4) կարճ կամ երկար ժամանակուան մը համար : Իսկ ճշմարիտ քրիստոնեաները, որ իրենց խաչը կը կրեն «մեռելով» սակաւին «կ'ապրին» եւ հաղածանքներուն մէջ ալ կը նմանին ծառի մը տերեւներուն, որոնք ձմեռը կը թափին, գարնան նորոգուած ուժերով երեւնալու՝ եւ կ'ապացուցանեն թէ իրապէս կենդանի են (Բ. Կորնթ. Գ. 8-10, Զ. 4-10) : Հաւաակ ցաւին ու վշտին, անոնց կեանքիւր Աստուծոյ մէջ պահուած են : Ինչպէս որ ովկիանոսի տաշուկ հասնները կը պաշտպանեն հիւսիսային երկիրները խիստ ցուրտէն, նոյնպէս ալ Աստուծոյ սիրոյն գեղը ու Անոր Սբ. Հոգւոյն հոսանքը կը պաշտպանեն եւ ուրախ ու գոհ կը պահեն իր ժողովուրդը :

Երբ Աստուծոյ մարդ մը կը ճանչնայ իր ինքնութիւնը, կը հասկնայ նաեւ թէ ամէն բան Աստուծոյ շնորհքին կը պարտի եւ չի հպարտանար, թէպէտ շատ մը մարդոցմէ առելի լաւ ալ ըլլայ :

Անգամ մը փիլիսոփայ մը Սուրբի մը այցելութեան գնաց եւ հարցուց «Ինչո՞ւ մարդիկ քեզ Սուրբ կը կոչեն» :

— «Մի միայն սիրոյ եւ յարգանքի պատճառաւ, իրականին մէջ, եւ իր շնորհքովը փրկուած մեղաւոր մեռ» պատասխանեց Սուրբը :

«Թէ որ դուն մեղաւոր մըն ես, ի՞նչ է քու եւ ուրիշներու տարբերութիւնը» հարցուց փիլիսոփայն :

Սուրբը անոր պատասխանեց մէջ բերելով Սոկրատի ըսած մէկ խօսքը. «Ես ինչ որ ալ գիտնամ, սորված եմ

նաեւ, գիտնալ թէ բան մը չեմ գիտեր» :

Սովորաւորի հետ խօսողը դարձեալ հարցուց .

«Եթէ դուն փիլիսոփայ մ'ես բան չես գիտեր, ի՞նչ է քո եւ հիմաւորակ ժողովուրդին տարբերութիւնը : Եիմ եւ, հասարակ ժողովուրդին տարբերութիւնը սա է որ, սլատասխանեց Սովորաւոր, ես գիտեմ թէ բան մը չեմ գիտեր. մինչդեռ անոնք չեն գիտեր իսկ թէ տգէտ են : Այսպէս ալ իմ եւ ուրիշներու տարբերութիւնը այս է, թե՛ս գիտեմ թէ մեղաւոր մ'եմ, իսկ անոնք չեն գիտակցեր եւ անտարբեր կը մնան իրենց փրկութեան մասին» :

Մարդուն հազին որ մարմինէն շատ գեր ի վեր է, ուղիղին միջոցաւ կրնայ գտնել եւ յայանուիլ, որ խորհելու նաւոր եւ զգայուն գործիքի մը կը նմանի : ձիւդ այսպէս ալ Սր. Հոգին նորոգուած եւ նախնաւոր կեանքի մը մէջ կը գործէ եւ կը յայանուի ուրիշներու փրկութեան համար ունեցած իր նպատակները եւնեակային մէջ իրականացնելու :

Ճշմարտութեան արեւն ալ ինքզինքը կը յայտնէ եւ կը ներգրծէ իր ծառաներուն մէջ, բայց ցաւալին ան է որ անոնք յաճախ լուսնին կը նմանին՝ որ միայն արեւէն փոխ առած բոլոր կը ցոլացնէ, լուսաւորելու համար խաւար գիշերը, եւ նոյնիսկ երբեմն խաւարումներու պատճառ կ'ըլլայ արեւին եւ երկրին միջեւ կենալով : Նմանապէս մենք ալ երբեմն ճշմարտութեան Արեգակին կ'աշխարհի բնակիչներուն միջեւ կը կենանք, զանոնք մեզին մէջ թողելով՝ անպատուելով իր անունը : զուրեմն թէ որ քու մէջդ եղած բոլոր խաւարէ ալ ան խաւարը ո'րջակ է» (Մատթ. 2. 23) : Մեր աչքերը որ մարմնին լոյսն են, թէպէտ այնքան փոքրիկ, կրնան մեծ կամ փոքր, մօտ կամ հեռու բաները տեսնել, եթէ աչքին նաւոր իրը կ'աւանայ ունէ պատճառաւ ոչինչ կրնայ տեսնել : Այսպէս պարտքը զգուշանալ որ Աստուածային լոյսը մեր մէջ չմեղագնի (Մատթ. 6. 16), այլ փայլի մարդոց առջեւ, որպէսզի տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է :

Պէտք է որ մենք նմանինք աւգակին, որ ուղիւսնին խորքը եղած առն է կամ իր շունը բռնելու է կամ շնչելու է օդի խորովակին որ ջուրէն դուրս մաքուր օդին հետ կը բարձրանի : Այսպէս ալ պէտք է մենք աշխարհի մէջ ըլլանք, բայց «ոչ աշխարհի», մենք պէտք չէ շնչենք այս աշխարհի յեմտքերով, ինչպէս որ Պողոս կ'ըսէ «Աշխարհի մեղած եւ Աստուծոյ կենդանի» : Կրնանք Սուրբ Հոգին շնչել աղօթքի խորովակին մէջէն եւ այսպէս յաւիտեանս ասրիլ :

Ուստի պէտք է մեզի ճանչնալ ինքզինքնիս : Երբ ճանչնանք մեր անոնք, մեր կարօտութիւններն ալ պիտի հոսկումնք, ու պիտի ջանանք բոլոր սրտով մեր լուսագոյնը ընել ճանչնալու զին, որուն մէջ մեր բոլոր կարօտութիւնները աւելն կ'ընդունուի : Կատարելապէս գոհացում քիսկի գոհուն յա խաւանս :

Աշխարհի վաստուած չճանցաւ, ոչ ալ կրնայ ճանչնալ, բայց «անոնք» կը ճանչնան Հայրը եւ նաեւ բոլոր անոնք, որոնց Բրիտանոս սիրոյ մարմնացումը պիտի յայտնէ» (Յովն. Ժ. 25 : Մատթ. ԺԱ. 27) :

.....

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՍՐ. ԳԻՐԲԸ ԱՄԵՆԱՕԳՏԱԿԱՐ ԿԵՐՊՈՎ

ՍԵՐՏՆԵԼՈՒ

Բ. Է. ԹՈՐՐԻ

(Նար. 1-2 Թիւէն)

7. ՍԵՐՏՆԵԼ ԶԱՅՆ ԻԲՐԵԻ ԱՍՏՈՒԾՈՅ
ԽՕՍԲԸ.— Պօղոս առաքեալ թեսաղոնիկեցւոց եկեղեցիին գրելու ատեն անդադար գոհութիւն կը մատուցանէ, որ երբ անոնք Աստուծոյ խօսքը լսեցին, ընդունեցին ոչ թէ իբր մարդու խօսք, հապա ինտոր որ ճշմարտապէս է Աստուծոյ խօսքը՝ (Ա. Թես. Բ. 13) : Պէտք էր որ շնորհակալ ըլլար Աստուծոյ : Նոյնպէս մենք կրնանք գոհունակութիւնով շնորհակալութիւն մատուցանել, երբ Տէրոյն շնորհքով կը հաւատանք եւ կ'ընդունինք խօսքը իբրեւ «Աստուծոյ խօսքը» :

Եթէ մէկը չի հաւատար թէ Սուրբ գիրքը Աստուծոյ խօսքն է, այնպիսին Սուրբ գիրքը սերտելու ատեն պիտի վհատի : Յիրաւի, եթէ մէկը չկրնար հաւատալ թէ Սուրբ գիրքը Աստուծոյ խօսքն է, ազնիւ եւ պարկեշտ թող ըլլայ եւ սերտելու ճամբան ընտրէ ու հետեւի անոր :

Յօդուածաշարքիս հեղինակը ատեն մը բոլորովին կը տարակուսէր թէ Աստուածաշունչը Աստուծոյ խօսքն է, սակայն զայն սերտելով, ուսումնասիրելով այսօր կատարեալ վստահութիւն ունի եւ բացարձակապէս կը հաւատայ Անոր ճշմարտութեան : Անոնք որ կասկածներու եւ երկմտութեան մատնուած են, անոնք կը կարդան կամ կարդացած են Սուրբ գիրքը միայն իբրեւ գիրք ոչ ուրիշ բան, բայց ամէն անոնք՝ որ անոր մէջ գտնուած գործնական վարդապետութեանց մինչեւ խորերը կը պեղեն, անոնք չեն կրնար տարակուսիլ : Ճշմարիտ քրիստոնէի մը պատուական գանձն է Սր. գիրքը : Սկեպտիկն անգամ, երբ ուղղամտօրէն կը հետեւի անոր սերտելով եւ ուսումնասիրելով՝ կ'օգտուի, կը քաջալերուի :

Որքան ատեն որ մենք լիովին համոզում գոյացուցած չենք թէ Սուրբ գիրքը Աստուծոյ խօսքն է, մեր բոլոր սերտողութիւնները եւ հետեւողութիւնները ապարդիւն պիտի մնան : Մեծ տարբերութիւն կայ տեսականօրէն եւ ճշմարտապէս հաւատալուն մէջ՝ թէ Սուրբ գիրքը Աստուծոյ խօսքն է : Հազարա-

ւորներ պիտի ըսեն քեզի թէ իրենք ալ կը հաւատան թէ այո, ան Աստուծոյ խօսքն է, սակայն չեն սիրեր ուսումնասիրել զայն եւ անոր ճշմարտութիւններուն խորը թափանցել:

Սբ. գիրքը իբրեւ Աստուծոյ խօսքը սերտելուն մէջ չորս օգտակար ճշմարտութիւններ կան.—

(ա) Կ'առաջնորդէ զմեզ անպայման ընդունիլ անոր սորվեցուցածները. նոյնիսկ եթէ անոնք անտրամաբանական եւ անկարելի թուին:

Արդարամտութիւնը կը պահանջէ որ մեր դատողութիւնը ի սպաս դնենք անսահման իմաստութեան:

Բնապաշտէ մը աւելի անբնապաշտ չկայ, որը իր սահմանաւոր իմաստութիւնը, միտքը, իբրեւ փորձաքար կը սեպէ անհուն իմաստութեան եւ կը ջանայ Աստուծոյ ամենաբարձր խորհուրդներու գիտութիւնը մարդուն դատողութեան ու քննութեան ենթարկելով հաւանիլ:

Չկայ աւելի տկար եւ ցած խորհուրդ մը քան ըսել «Այս չկրնար ճշմարիտ ըլլալ, թէեւ Աստուած ըսած ըլլայ ալ, ի՞նչու, որովհետեւ իմ խելքս եւ դատողութիւնս չեն վաւերացներ զայն»:

«Բայց դուն, ո՞վ ես, ով մարդ որ Աստուծոյ դէմ պատասխան կուտաս». Հոովմ. Թ. 20:

Իրականապէս իմաստուն է, ան որ երբ ինքզինք անհուն իմաստութեան առջեւ կը գտնէ, կը խոնարհի եւ կ'ըսէ, «Սօսէ ինչ որ կը կամիս եւ ես պիտի հաւատամ»:

Երբ մենք հոգիով համոզուած ըլլանք թէ բոլոր Սուրբ գիրքը Աստուծոյ խօսքն է, այն ատեն անոր ուսումնասիրութիւնն ալ վերջակէտը պիտի դնէ բոլոր հակառակութեանց եւ անհիմն վիճաբանութեանց:

Միայն մէկ բան կրնայ լուծել բոլոր «ինչու»ներու հարցերը.— Այսպէս կ'ըսէ Աստուծոյ սուրբ խօսքը:

Կան շատեր ալ որ կը սորվեցնեն հաւատալ թէ Սբ. գիրքը Աստուծոյ խօսքն է, բայց երբ ջանաս ցուցնել թէ Սբ. գիրքը ինչ կերպեր կը սորվեցնէ կարգ մը վիճաբանութեանց եւ բանավէճերու շուրջ, այնպիսիներ այդ պարագային գլուխնին կ'երեւցնեն եւ կ'ըսեն, «Այո՛, բայց ես այսպէս կը կարծեմ, բժիշկը, գիտունը եւ կամ եկեղեցին այդպէս չսորվեցուներ»:

Այս կերպ սերտելէն շատ քիչ օգուտ կրնայ յառաջ գալ:

(բ), Կը սորվեցնէ մեզ բացարձակ վստահութիւն ունենալ. վստահիլ անոր մէջ յիշուած բոլոր խոստումներուն իրենց նոյնութեամբ: Այն, որ Սբ. գիրքը կ'ուսումնասիրէ իբրեւ Աստուծոյ խօսքը, Անոր խոստումներէն մէկ նշանագիր մ'իսկ չշեղիր, այլ կ'ըսէ «Միայն Աստուած է որ սուտ չկրնար խօսիլ, եւ քանի որ խոստացած է պիտի կատարէ»: Այսպիսի մէկը չփնտռեր ու չկրնար խոստմնադրութ հանել զԱստուծո, ընդհակառակը արթուն եւ զգաստ կը կենայ եւ կը ջանայ ստուգել թէ ճիշդ ի՞նչ նշանակութիւն ունի, եւ երբ իրեն կը յայտնուի ճշմարտութիւնը, այլեւս անխախտ կերպով սոյն խոստումին կոթնելով կը հաստատուի ու ամէն բան վնաս կը սեպէ, Անոր լեցունութենէն շնորհք շնորհքի վրայ առնելով: Ահա գաղտնիքներէն մին ալ այս է:

Աստուծոյ խոստումներուն որսորդը եղիր, զանոնք գտնելուդ պէս կե՛ր, իւրացո՛ւր»: Այս է Աստուծոյ քեզի համար պահած օրհնութիւններու տիրանալու միակ ճամբան: Այս է բանալին, Աստուծոյ բոլոր շնորհաց զանձարանը բանալուն:

Երանելի է այն մարդը, որ սորված է այս կերպով հետեւիլ Սբ. գրքին եւ կը սիրէ նորանոր ճշմարտութեանց տեղեակ ըլլալ ու առնց համար ամէն բան վնաս կը սեպէ:

(գ). Յօժար կ'ընէ բոլորանուէր հնազանդութեան.— Հնազանդութիւն անոր բոլոր պատուիրանքներուն, առանց հարց ու փորձի: Այսպիսի հնազանդութիւն մը կ'ընայ դժուար երեւիլ, անկարելի թուիլ, բայց երբ գիտէ թէ Աստուած պատուիրած է, կ'ըսէ, «Ես ուրիշ բան չ'ունիմ ընելու, այլ միայն հնազանդել, հետեւանքը Աստուծոյ թողելով»:

Եթէ կը փափաքիս օգուտներ քաղել քու սերտողութենէդ, որոշէ այս վայրկեանէն սկսեալ սորվիլ Աստուծոյ պատուիրանքները եւ կատարել զանոնք ամենայն հնազանդութիւնով: Այն ատեն երբ քեզի մութ խոստումներ եւ պատուէրներ երեւնան, պիտի ջանաս զանոնք ալ ստուգել վստահելով որ Տէրը քու հնազանդութիւնովդ քեզի լոյս պիտի տայ անոնց մասին:

(դ). Պիտի սորվեցնէ քեզի թէ դուն Աստուծոյ ներկայութեան առջեւ ես. Երբ ոեւէ համար մը կը կարգաս Աստուծածա-

շունչէն, մտիկ ըրէ՝ ու լսէ՝ կենդանի Աստուծոյն ձայնը որ ուղղակի կը խօսի այդ համարով :

Երբ սովոր ես լսել այս խօսքերը իբրեւ կենդանի Աստուծոյ պատգամները եւ կը հաւատաս թէ Աստուած մեր Հայրը ուղղակի ինքն է որ կը խօսի, այս քեզի նոր զօրութիւն խրախոյս եւ հաճոյք մը պիտի բլլայ :

Ծննդոց Ե. 24, համարին մէջ կ'ըսէ «Ենովք Աստուծոյ հետ քալեց», չկայ ասկէ աւելի քաղցր մխիթարութիւն երբ մենք միշտ Աստուծոյ ներկայութիւնը մեր հետը ունինք : Այն ատեն ներշնչեալ վիճակ մը կ'ունենանք :

Մենք Աստուծոյ փառաւորեալ ներկայութիւնը վայելելու առանձնաշնորհն ունինք այս խորհուրդը, մեզի յոյս կուտայ ու երբ մենք Աստուծոյ խօսքին առջեւ կը կենանք կը սեպենք թէ ամենուրեք Հայրն Աստուած է որ կը խօսի իր խօսքով եւ մենք կը սիրենք լսել զԱյն :

«Երկինքն է որ վերէն վար կ'իջնայ» :

Այն որ այս խորհուրդներով համակուած կը մօտենայ Աստուծոյ խօսքին, սերտելու զայն, ի՛նչ սուրբ վախ եւ անպատում ուրախութիւն պիտի ունենայ իր հոգւոյն մէջ :

ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՄՈՒՀԱՄՄԷՏ

Արդիւնաւոր խօսակցութիւն մը տեղի ունեցաւ մահմետականներու մեծ միաժողովի Յրվէմընի եւ թուրք ուսուցիչի մը միջեւ Քրիստոսի եւ Մուհամմէտի վրայով : Մուսթաֆա պէյ (այս էր յիշեալին անունը) հազիւ տեղաւորուած էր իր նստարանին վրայ եւ ահա խօսակցութիւնը սկսաւ : Ի մէջ այլոց Տօքթօր Յվէմըն ըսաւ. «Բոլոր մարդիկ զԱստուած կը փնտռեն. հրէաները եւ թուրքերը զԱստուած կը փնտռեն, բայց ճշմարիտ քրիստոնեաները զԱստուած գտած են» : Վերջինին՝ տարակուսեցաւ Մուսթաֆա, ուստի Տօքթ. Յվէմըն յստակ կերպով պատասխանեց, «Ես զԱստուած երկու անգամ գտած եմ, մէյ մը Քրիստոսի մէջ եւ երկրորդ Սբ. զրքին մէջ» : Յետոյ պատմեց Հնդկաստանի մէջ եղող մահմետականի մը վրայով, որ քրիստոնեայ եղած էր : Տօքթ. Յվէմըն հարցուց այդ մարդուն թէ ինչպէս դարձի եկած էր : Նա պատասխանեց, «Գուրանին միջոցաւ դարձի եկած եմ» : Մինչ

Մուսթաֆա դարձեալ զարմանքով հարցուց թէ ի՞նչպէս Գուրանին միջոցով դարձի եկած էր. ան սկսաւ պատմել. «Գուրանին մէջ երեք տեսակ բան գտայ կ'ըսէր. 1.— Թէ բոլոր մարդիկ մեղաւոր են, նոյնիսկ մարգարէներն ալ : 2.— Թէ միայն Քրիստոս առանց մեղքի է, եւ 3.— Թէ եթէ ես Քրիստոսը աւելի ճանչնալ կ'ուզեմ, պէտք է ինձի (Նոր կտակարան) անունով գիրքը կարդամ : Ասիկա ի գործ դրի եւ այսպէս քրիստոնեայ եղայ :

Այն ատեն Տօքթ. Յվէմըն հարցուց մահմետականին, «Մուհամմէտ ո՞ր ծնած է» : «Մէքքէի մէջ» : «Եւ ո՞ր մեռած է» : «Մէտինէի մէջ» : «Ո՞ր թաղուած է» : «Մէտինէի մէջ» : «Եւ հոն կը հանգչի՞ մինչեւ յարութեան օրը» : «Այո» : Տօքթ. Յվէմըն շարունակեց. «Ո՞ր ծնած է Քրիստոս, ո՞ր մեռած, եւ այլն» : Քրիստոս հիմա ո՞ր է հարցումին վրայ Մուսթաֆա ուզելով խոյս տալ. ըսաւ. «Հրէաները կ'ըսեն թէ անոր մարմինը գողցուեցաւ» : Ուստի Տօքթ. Յվէմըն առանց վարանելու հարցուց. «Գուրանը ինչ կ'ըսէ այս մասին» : Մուսթաֆա լոց : Տօքթ. Յվէմըն շարունակեց, Գուրանին մէջ գրուած է թէ Քրիստոս Աստուծոյ աջ կողմը նստած է : Մուսթաֆա խնդրեց որ միաժողովը ստուգէ զայս : Ասոր վրայ Տօքթ. Յվէմըն պատասխանեց. «Ձեր մարգարէն մեռած է, մեր մարգարէն կ'ԱՊՐԻ» :

ՔՐԻՍՏՈՍԻ ԴՊՐՈՅԻՆ ՄԷՋ

Ինչպէս որ ճշմարիտ կեանքը Յիսուսի անձնաւորութեան հետ կապուած է, նմանապէս ճշմարիտ ուրախութիւնը Ասոր ընկերակցութեան հետ կապուած է :

Աշխարհ իրաւունք ունի մեր վրայ Յիսուսի փառքը փնտռելու :

Երբոր աշխարհի վրայ միշտ ողբերգութիւններ ընել ստովինք, չենք կրնար վերը անմիջապէս ցնծութեան երգերուն մասնակցիլ, եղանակը անձամբ կ'ըլլայ մեզի, ուրեմն հոս սկսինք ցնծութեան երգերու վարժութիւններ ընել :

Ամէն հակակրօնական տակ մասնաւոր օրհնութիւն մը ծածկուած է :

Ան որ երկրաւորը ամուր կը բռնէ, կ'ապացուցանէ թէ տակաւին տեսած չէ երկինքի գոնձերը :

Ան որ չուզէր նախատեսուող խաչը Յիսուսի սիրոյն իր վրան առնել, չի կրնար փրկութեան խաչը ձեռք ձգել :

Իր անձին ապրողը շնորհաց գուլակ չէ :

ԹՈՒՐԹԵՐԷՆ ՄԱՍ

ԱՉԸԳ ՄԷՔԹՈՒՊ

— 00 —

ԲԱՊՊՏԱ ՍԷՎԿԻԻԼԻԻԼԷՐ


Սօնսուղ համալար Ալլահըմա քի էպետի մուհապպէթլէ պիզի սէվիպ քէնտինի Յիսուս Քրիստոստա պուհա պլըրազ պիւտիրաի : Էօյրէնմէյէ գիյատէ ճիտտի հասրէթ օլուր իսէ տա-հա գիյատէ էօյրէտէճէք : Յիսուս Քրիստոս պիզ ճէննէթտէն սիւրիւլիւպ զայ օլմուշլարը արայըպ պուլմադ վէ սէմազի վաթանա կէօթիւրմէյէ կէլ-տի : Պիզ օնճա քէօրլէնմիշիք քի Յիսուստէն սէօզիւնիւ անկլամայըպ էն ճիտտի հասրէթլէ պու թէնանի էօրտէ րահաթ իսթէյօրուզ : Յի-սուստէն չէքալիէ էն պէօլիւք կիւճլիւք իմանիէ իթաաթ էթմէտիյիմիզ : Էն ճիտտի հասրէթլէ իսթէյօրուզ քի Յիսուս պիզիմ տէտիյիմիզի էթսին : Էյի պիլիւրիմ չօճուղար քի պապայա անայա տէյօր պու էվաէ պէնիմ տէտիյիմ օլ-մալը : Պիզտէ Յիսուս տէյօրուզ քի սէն պիզիմ իսթէտիյիմիզի էթմէլիսին : պիզ ախրէթի կէօր-մէք, պիլմէք, վէ պու թէնտէ րահաթ օլուպ գէվզ ու սէֆայլէ հաշամադ իսթէյօրուզ ճիտտի արղուլուզ պու : Յիսուստէն էյի պիլիւրի քի օ միւմքիւնիզ տիր : Ալլահըն մէրամը պիզի թէն-տէն, տիւնեատան, քէսէրէք քէնտինտէ օլան հագիզի սէլամէթի վէրմէք իսթէյօր : Իշթէ պու հօլտա Ալլահ իլէ ուլուշամայօրուզ : Ալլահ իս-թէյօր քի պիզի թէնտէն, տիւնեատան այլըրա-րազ սէմազի վարըզ էաէ, քէնտինի հուզու-րանտա տուրմայա լայըզ հալա կէթիւրէ : Պիզ իսէ հայվանի արղուլարա էօլմէք ասալ իսթէ-մէյօրուզ : Յուլհ. 6 ընճը պապտաքի Լուսի ճէնք պու տըր : Յիսուս օ պապտա հագիպաթը պլը-րազ պիլտիրտիյի, կիպի Լհալի վէ շայիրտլըտէն նիլէլէրի այլըլտըլար, Յիսուս թէմամէն թէս-լիմ օլամատըլար, պէնճէ քիլիսա էլան խաչըն մանաաընը անկլամադ իսթէմէյօր : Էպետի հա-յաթա ինանամադ պէս կէօրիւնէնէ հափըլըր : Պու արըն էն էսասի իլլէթի, գէմինի թէնանի արղուլարա վազ կէլմէք իսթէմէմէսի տըր : Յիսուս տա էյի պիլիւրիքի էսկի ասէմի թէրք էթմէքսիզ Խէնի ասէմի կիյինէմէյէճէյիզ. Իշ օրտան պօղուլուլօյ. Բ. Գօյ. 5 պապ 4 ալէթ չօյ մանաաար տըր : Էսքի տիշլէրի (քի անլըր չիւրիւմիւշ, հիլ իշէ հարամադ) չէքալիմէյէ նիլէթիմիզ հօզ, օ տա չըգմադարդ եէնիսի զօնա-մադ : Իշթէ սըրատա պօղուլուլօյ, էսքի ասէմի սօյունմադա րազի օլմայօրուզ Ալլահտա էյի պիլիւրիքի օնլարը սօյունմադարդ րահաթ օլա-մայըզ, պու հօլտա Ալլահա չօզ գամմէթ վէրի-յօրուզ Ալլահտա պիզէ ճէպըր էթմէք իսթէմէյօր.

իմտի պու շէյ արատընտա չօզ սըզըլըյօրուզ վէ չօզ էզիլիյօրուզ : Իմտի սիզտէն ճիտտի րէճամ, պու սէմազի Տօքթօրա թէմամէն թէսլիմ օլուն : Ինանըն օ պիզի էօլտիրէն պու մահապու կիւ-նահտան փաքէյէրէք Ալլահըն սօնսուղ հայա-թընա կէօթիւրմէք իլլան չալըլըյօր : Պիզտէ օլան էօլտիրիւճիւ կիւնահալարտան հէր հալ այ-րըլմալըիզ. օնլարըն քէսիւրիպ աթըլմասընա րա-զի օլամադ իսէք պու ալըզ քի իլլէլպէտ հէլաք օլաճաղըզ : Պիզ կիւնահալար էօլտիրէմէզ իսէք օնլար պիզի մութլազ էօլտիրիւր : Ալլահըն միւրաաը, պու ճիանտան շէյթանը վէ կիւնահալ իլլէլպէտ մահվ էթմէք տիր : Ալլահ կիւնահալ միւսաատէ էթմէզ, իմտի պուլնլարը պէրրազ պիլլէրէք մահապու կիւնահալ պին պիր տալը, պուտաղը իլէ էօլտիրէլիմ անա ասալ միւսա-ատէ էթմէյէլիմ : Էյի պիլիւր պու թէն արղու-լարը մալըլազա էօլմէլի, իմտի անլէրէ ասալ միւսաատէ էթմէյին : Պու արըն էն ազիմ թէհ-լիքէսի կիւնահալ քիպար շէրէ կիւմլիսի տիր : Շէրլըլի հապըն իլլանտէ գէհր օլաուղու կէպի պու մէտէնիլէթի իլլանտէ էօլէ գէհրլէր վար քի մալըլազա անէմի էօլտիրիւր. իմտի մէտէ-նի ասէմին գէհրլի սէօզլէրինտէն ալաանմայըն Յիսուս նէ տէտի իսէ օնա թէմամէն գանըն-լուզ 9 պապ 55 ալէթի էտին : Սօն տարտա խա-յիմիզ ալըզ, Յիսուս հաղընտա մալըլազա կէլէ-րէք պու Փէսատա խիթամ վէրէճէք. սաղընըն ալաանմայըն սայքի հէվ քիլիսալար վէ պիշօֆ-լար պիլլէրտէ չիւրիւտիւ, Քրիստոս օնլարը իսթիֆրազ կալէք : Սիզ տիրի Քրիստոսու գալպիսիզէ մէլիք գապուլ էտէրէք անը աինկ-լէյին, Օ նէ տէրտէ էյլէյին : Պէն թէքմիլ ճիա-տիլէթլէ ինանարմ քի հագիղաթ Քրիստոս քէն-տինի տիր : Շէյթանըն պիլիւրի մլըրամը պիզի թէնանի տիւնեաթի արղուլար իլէ էօլտիրմէք տիր. կէօրէյիմ սիզի շէյթանա ուլմայըն : Անըն պէս մէրամը պիզի էօլտիրմէք, Յիսուստէնք իսէ հաշաթմադ : Իմտի թէնտէն, տիւնի գէվզ ու սէֆալարընտան օլապիլիւրի գատար ուղազ գալըն, չիւն օնու իլլի գէհրլի, էօլտիրիւճիւ տիր : Խաչը թաշըլըն քի թաճ ալաանընզ, Յի-սուս թէմամէն թապի օլուն : Ինանըն օնու մաղսէտի պիզի Էպետի հայաթա էրտիրմէք տիր : Պէն պուլու չօզ պէրրազ անկլայարազ, շէյթանտան, կիւնահալտան սիզի սաղընարրմազ իսթէրիմ, Յիսուս կէլտի քի պիզի կիւնահալտան գալըլարա : Օ պիզի հէր չարէ իլէ կիւնահալտան գալըլարմազա չալըլըն Յիսուս թէմամէն, թէ-մամէն կիւվէնիւն. չօզ սէլամլարը,

Ա. ԼԵՒՈՆԵԱՆ

Այնթապ, Նոյմ. 1927

Մ Ի Ի Մ Ի Ն Տ Ի Ի Ն Ե Ա Տ Ա



Բուհանի քիւրքէի հոգաւորականաց իմ թիւազընա մալիք օլան միւսինսնէր նիսպէթէն ազ տըրլար. էքսէրիյէթ իսէ տիւնհազի պիր մուհիթ իշինտէ հաշամագ մէնպուրիյէթինտէ պուլունտուգլարընտան, պիր չօգ կիւնլիւքլէրէ վէ թէատարիլիւրէ մարուգ տըրլար :

Պիր Համպուրկ հէլքէն կէմիսի Ինկիլթէրանըն ճէնուպունտա Քարաիֆ իսկէլէսինտէ չօնկհօնկա կիթմէք իւզըն քէօմիւր ալմագ իւշինտ տուրուր. կէմի թա'իֆէլէրի արաւընտա չալըմագտա օլան պիր միսիօնէր շիրքէթինին ըսհօհանի իշնիսի մէգքիւր կէմիտէ իշլէմէքտէ օլան պիր քրիսթիան թա'իֆէլէն էվվէլէն ալմը օլտուղու պիր մէքթուլ իւզէրինէ կէմիյի զիյարէթէ կէլիւր : Միսիօնէր մէրգուլուն ըլֆաղաթընտա պաշգա ըսհօհանի արգատաշլարտա պուլունտագ զանն էտիյօր իտի, լաքին թամմ աքսինի պուլտու : Միսիօնէր կէմի էքրատընը իպատէթէ տալէթ իթտիյինտէ, զաիթան իմթինտ էյլէտի, տիւմէնճի շէտիտ պիր սուրէթտէ ըլտա էյլէտի վէ թա'իֆէլէր էն էնկին վէ փէրվաւը պիր սուրէթտէ գարըն կէլտիլէր : Պու կիպի պիր շէյէ միսիօնէր էվվէլէն ըսթ կէլմիշ տէյլէ իտի : Պէօյլէնէ Կիրակի կիւնլիւտէ իպատէթէ անճագ անըն կէնճ տօսթու կէլտի : Իւզմէթտէն սօնկրա կէմիյէ ալմէթ էտէր իքէն մէրգուլ թա'իֆէ քէնտինէ ըլֆաղաթ էտէն միսիօնէրէ քէտիւր իլէ տօլու օլան գալպինի պօշալտարագ շէօյլէն ալլէթտի : «Ծիւմլէսի պանա գարըն տըրլար, կէմիտէ Քիթապը Մուգատտէսիմի օգուլմագ իւշինտ չըգարտըղմտա Քիթապա թիւքիւրտիլէր, վէ պաղըրըշլարլէ պէնի օտաւտան տըշարըն ալթուրլար : Պաաղէն օգուլմագ արգու էթտիյիմտէ կէմինին իսսիգ պիր քէօշէսինի արարըմ, օրատաւտա պէնի ըսհօհանի պրագաւաղար : Էն ատի քիւֆրէր վէ իսթիհզալարլէ պանա զանմէթ վէրիւրլէր, վէ տիւմէնճիին քէօթիւ մէսլէյի պունլարա ճէսարէթ վէրիւր : Շիմտի պէն նէ հափապիլիւրիմ, էն պէօյլէք արգուլմ պու կէմիտէն չըզըպ պաշգաւընա կիրմէք տիր» :

Պէօյլէ պիր սըրատա սօղըրու պիր նաւիսիաթ վէրմէք նէ՞ կիւն տիր, ամմա Եինէտէ վատ էթտիյին պիր իշտէն գաշմագ տօղըրու օլամագ : Պիր քիմտէ պիր Եէրէ թալին էտիլմիշ իսէ օրատա մէրտճէ տէվամ էթմէլի, պունտան մատա սէօգ օլմագսըգ սիւքիւթ էօմր իլէ պու միւսթէհզիլէրին գալպինի զաղանմագ Ալլահըն իրատէթի օլապիլիւր :

Կէմի իսքէլէտէ տուրտուղու միւստէթ զարֆընտա, քէյֆիյէթ թէպտիլ օլմատը : Մարթին (քի քրիսթիան թա'իֆէլէն իսմի պու իտի) պէրապէրինճէ պիր չօգ ըսհօհանի քիթապ վէ

ընտալէլէր ալարագ, միւզթարիպ պիր գալպլէ պէօյլէ Ֆէնա պիր արգատաշլար իշինտէ Եօլունտ տէվամ էթտի : Ֆուրթունալարտա սիւքիւթլէ քէնտի Ֆարգընը իճրա էտէրէք իսթիհզալարա թէհօմիւլ էտէր իտի : Կիրակիլէրի վէ պաշգա վաղթլարտա Ֆուրսաթ պուլտուղմա Քիթապը մուգատտէսինի օգուլմագը իհմալ էթմէգ իտի : Պիր Կիրակի կէմի Իւմիւս պուլունտա տուրտուղու վաղթտա քէնտի Քիթապը մուգատտէսինի չըգարալագ կէմիին Էօն թարաֆընա տօղըրու կիտէրքէն արգատաշլարընը պիրի քէնտինէ «էյ սուրը Մարթին (չինքի իսմինի պէօյլէ պօմուշ իտիլէր) կիթմէնէ հաճէթ Եօգ պուրատաւտա օգուլապիլիւրին», պիր պաշգաւտա «էլէլ շու սուրը քիթապլարտան պիղէտէ վէր, արատա պիր պաշգա շէյլէր տիւշինմէքտէ քէօթիւ օլմագ» տէտի :

Պունտան սօնկրա Կիրակիլէր թէպտիլ օլտու : Մարթին արգատաշլարընա ընտալէլէր վէրտի պիր տէֆա քէնտիլէրէ Ինճիլտէն օգուլմագ ճէսարէթ էթտի, վէ անլէր սիւքիւթ իլէ տինկէտիլէր, կիւնտա պիր քէնտինէ գալպլէրինի աշանլարտա օլտու : Չօնկհօնկա Ելթիշտիկլէրինտէ իպատէթ օլտու. պու տէֆա Մարթին Եօլուն Եալընըգ կիթմէյէ մէնպուր օլմատը : Գաիթան թա'իֆէլէրի արատաշլար մէյտանա կէլէն ըսհօհան թէաճճիւլ էյլէտի վէ Եինէտէ միւսատա էյլէտի : հաթթա Մարթինին թէքիֆի իւզէրինէ Պատուէլիյի կէմիտէ իպատէթ էթմէսի իւշինտ տալէթ էթտի : Պու տէֆա իպատէթէ կէլմէյէն պիր Ֆէրտ գալմատն, հաթթա տիւմէնճի պիլէ հազըր իտի, անտէն սօնկրա Համպուրկա ալմէթլէրինտէ սէլամէթ պիր Եօլունուղլարը օլտու : Վէ Մարթին Քարտիֆտէքի միսիօնէրէ Եաղտը քի պէնիմ կէմիտէ գալարագ տալանմաղըղմ տօղըրու իմիշ :

Պիր սէնէ գատար սօնկրա Քարտիֆէ պիր պաշգա Համպուրկ կէմիսի կէլտի, վէ էվվէլէք միսիօնէր պու կէմիյի տալի զիյարէթ էյլէտի : Կէմինին տիւմէնճի միսիօնէրին տիգաթընը ճէլպ էթտի : Միսիօնէր տիւմէնճի իլէ գօնուշմագ իսթնտի իսէտէ օ տալմա գաշընտը : Էնճամ միսիօնէր Եանընա կիտէրէք «Աճէպա պէն սիգի պունտան էվվէլ պուրատա կէօրմէմիշմիմ» տէտի :

«Օ պիր ազ սըզըլարագ էվվէթ պէն սիգին սուրը Մարթինին օլտուղու կէմիտէ իտիմ» տէտի :

Սէն պու Մարթին հազըրնտա նէ՞ տէրսին : «Ա՛հ օ տէտիյինէ ինանան պիր քրիսթիյան տըր» :

Սէն էյ տօթթուլմ պէօյլէ պիր ատէմ օլմագ իսթմէմէ գմիսին. շիմտիյէտէք օլտուղունտան փէք մութլու օլմագսըն :

«Օնա շիւղհէ եօզ լաքին գիյառէսիլէ կիւճ տիր» ճէվապ վէրաի, եինէտէ խըղմէթլէրէ կէլ-տի :

Կէմի ուղուն վազթ Բարաիֆտէ տուրտու, չօզ տէֆա Ալլահըն քէլամընը իշիթմէյէ ֆուրսաթը օլտու : Կէմի եօլա չըգմազտան պիր Բիթապը մուգատտէս սաթուն ալալադ եօլճուլուղունու անըն իլէ տէվամ էյլէտի : Պէօյլէճէ Մարթինին էօմրիւ օնա պէրէքէթ օլմուշ իտի :

Պու վազապը իքի նէվ օղումադ օլապիլիր, պիրի օղուլուղ ունութմադ, տիկէրի իսէ անըն հազգընտա տիւշիւնիւլ քէնտի քէնտինէ սիվալ էթմէք քի Մարթինին եէրինտէ պէն օլաա իտիմ պէօյլէ եափաճա՝գմը իտիմ, էյէր եափմալաճապ իտին իսէ աճէպա նի՞չիւն, տէյմէ՞գմի :

Միւթ. Ե. Պ.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՒՐԵՐ ՄՈՒՀԱՄԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ. —

Անցեալները Պարսկաստանի մէջ կարգ մը եկեղեցիներու ներկայացուցիչներ համաժողովի մը սա հարցը ուսումնասիրեցին. «Ո՞րն է մուհամեդականներուն մօտե-նալու ամենալարմար մեթոտը» :

Եւրոպական միսիոնարութեանց այս ներկայացուցիչ-ներուն մէջ կային Հայ եւ Ասորի (Նեստորական) եկեղեցի-ցիներուն ներկայացուցիչներն ալ :

Այս համաժողովին մասնակցողներուն մէջ կային նաեւ ութը նախկին մուհամեդական, երեք նախկին Հրէաներ, որոնք քրիստոնէութիւնը ընդունած էին :

Մասնաւորապէս հետեւեալ կէտերը ուսումնասիրուեցան. —

1.) Աստուածաշունչը կարելի եղածին չափ շուտով տարածել ժողովուրդին խաւերուն մէջ :

2.) Գուրանը պարսկական լեզուով հրատարակուելու պէտքը :

3.) Ժողովուրդին աւելի դիւրու մօտենալու դիտա-ւորութեամբ յետ այսու «Յիսուս Քրիստոսին տեղը «Րուզ Ուլլահ» գործածել : — Այս բառին գործածու-թեան հանգէպ առարկութիւններ եղան եւ իրաւունքով, այնպէս որ վերջնական եղբայրացութեան մը չկրցաւ յանգիլ ժողովը :

Ներկայացուցիչները կը խորհին թէ եթէ Գուրանը հրատարակուի ժողովուրդին հասկցած լեզուովը, այն ատեն անոնք պիտի հասկնան անոր խեղճութիւնը բաղ-դատմամբ Սք. դրքին : Երկրորդ պատճառ մըն ալ աս է որ մուհամեդականներուն խօսելու եւ անոնց միտքը լուսաբանելու համար այս գիրքը իրենց հասկցած լեզ-ուովը պէտք է կարգաւ տալ իրենց :

Թուրքիոյ մէջ բաւական ժամանակէ ի վեր է որ կրօնքի ազատութիւն հռչակուած է հանրապետութեան նախագահին կողմէն :

Ապագային իւրաքանչիւր չափազանց թուրք կրնայ իրեն համար ընտրել իր ուղած կրօնքը : Այս խնդիրը դարաւոր մուհամեդական ժողովուրդի մը կողմէ անմիջապէս չկրնար այնպիսի ուղարկութեամբ մը ըն-

դունուիլ ինչպէս ոմանք պիտի խորհէին, եւ եթէ ոմանք իրենց կրօնքը ձգելով ուրիշի մը փարելու ըլլան, յա-ւէտ պիտի սիրեն անկրօնութեան դիմել ինչպէս են ժո-ղովուրդի առաջնորդներուն մեծագոյն մասը :

Բայց եւ այնպէս չմոռնանք թէ ճշեղ է այն դուռը եւ քիչ ուղոր են անոնք որ անկէ կը մտնեն ի խոտ-տումը մեր Տէրութեն :

Ապա մեզի այնպէս կուգայ թէ այդ երկիրը մար-տիրոններու արեամբ արդէն գնուած է Աստուծոյ թա-գուսրութեան համար, ուստի միայն հաւատարմութեամբ եւ համբերութեամբ գործել հարկ է :

Ատանայի գրատուն մը ուրիշ գրքերու կարգին թուրքերէն լեզուով Սուրբ Գրքին ալ կը ծախէ : Պու-տոյ եւ շրջակայքի բոլոր Սուրբ գրածախները քաջաւեր-ուած են որ այժմ շատ աւելի Սք. գրքեր եւ մատեր կը ծախեն քան ուրիշ ատեններ :

Վերջերս բարեկեցիկ կրթեալ թուրք մը Այսոֆիա մզկիթին հրապարակը կեցած կը գոչէր «Այս Աստուա-ծաշունչը ճշմարիտ Աստուծոյ խօսքն ըլլալու է եւ իրա-ւամբ, քանի որ 580 տարբեր լեզուներու թարգմանուած է» :

Ընդհանրապէս եւն. Բ. «Արուեստ» նկարչական, երա-ժշտական պատկերազարդ երկամենայ Հանդէս, Հասցէ՝ Mr. Aram Yeremian Spantarian, No. 31, Erivan Armenie.

«Սեռն ու սէրը» Աղջկանց եւ դեռաւոր կանանց հա-մար, հիւրիակ՝ Dr. Djebedjian, Aleppo, (Syrie).

«ԲԱՆՔԵՐ» Գ. հատորը գեղեցիկ եւ հաստատուն կազ-մով կազմուած. ունենալ փափաքողներ թող մեզի դի-մեն, դեռ քանի մը տաճարներ կրնանք առլ : Գին Թրանսա իւ Սուրիա 10 Թրանք, արտասահման 15 Թր.

ՄԵՐ ԲՈՎ ՊԱՏՐԱՍԿԱՆ. —

Սուրբ Գրքեր հայերէն լեզուով ամէն մեծուճեամբ ոսկեղոծ եւ հասարակ :

Գրպանի նոր կտակարան եւ Սաղմունքի գրաբար եւ աշխարհաբար :

Սք. Գրքեր հայատառ թուրքերէն խոշորագիր եւ մանր : Հոգեւոր երգարան, ձայնագրուած եւ գրպանի, հա-սարակ եւ ոսկեղոծ :

Կան նաեւ ամէն տեսակ հոգեւոր գրքեր : Աղօթագիրք, Ապացոյց ճշմարտութեան, Առաջնորդ նոր կտակարանի, Առիւծի բերնէն, Բարոյաշունչ քեր-թուածներ, Երրորդութիւն եւ Հայութիւն, Թիփլէվիս խաչ տանող, Հաւաքումն վկայութեանց, Սեկնութիւն Ա. Բ. Գ. Նարեկ, Ներածութիւն Սք. գրքի, Չինացի երէց Հիշի, Սք. պատերազմ, Սք. գրքի բառարան, Սք. գրքի աշակեր-տին գիրք, Տիտոս խաչին մէկ ընկերը, Տէրջը հրաշք կեանքիս մէջ, Քարոզներ Ա եւ Բ, Քրիստոնէական սկզբունքներ, Քրիստիանոսի ճամբորդութիւնը հայերէն եւ հայատառ թուրքերէն, Սատու Սունտար Սինկի :

Փափաքողները թող դիմեն առ
GULCHAN BADAQIAN, 29, Rue Fauchier, MARSEILLE

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպգր. Ա. Երէցեան, 40, Րիւ տէ Տօմէրիքէն